

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ բաժնետերերի
արտահերթ ընդհանուր ժողովի 26/11/2007թ. թիվ
40 որոշմամբ

ԳՐԱՆՑՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկում

Փոփոխված է բաժնետերերի արտահերթ ընդհանուր
ժողովի 22/12/2016թ. թիվ 66 որոշմամբ

բաժնետերերի արտահերթ ընդհանուր
ժողովի նախագահ

«Կենտրոնական բանկի նախագահ»



Արթուր Զավադյան

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ»
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Նոր խմբագրությամբ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1 «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ (այսուհետև՝ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ) ձևավորվել է «Էֆես» Ապահովագրական Փակ Բաժնետիրական Ընկերության անվանափոխության միջոցով:
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ գրանցվել է պետական ռեգիստրում 22.09.1997թ. և ստացել Փակ Բաժնետիրական Ընկերության կարգավիճակ:
28.03.2008թ.-ին ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ վերագրանցվել և վերալիցենզավորվել է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:
- 1.2 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ գործունեության հիմնական նպատակն է աջակցել տնտեսության զարգացման գործընթացին՝ Հայաստանի Հանրապետությունում լավագույն միջազգային չափանիշներին համապատասխանող ապահովագրական ծառայություններ մատուցելու միջոցով:
- 1.3 ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ իր գործունեության մեջ անկախ է օրենսդիր և գործադիր մարմիններից և ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով, այլ նորմատիվ ակտերով, ՀՀ կենտրոնական բանկի որոշումներով և սույն կանոնադրությամբ:
- 1.4 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ Բաժնետերերի և ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ միջև հարաբերությունները կարգավորվում են սույն կանոնադրությամբ:
- 1.5 ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ իր պարտավորություններով պատասխանատու է սեփականության իրավունքով իրեն պատկանող ամբողջ գույքով (միջոցներով):
- 1.6 ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ պատասխանատու չէ իր բաժնետերերի պարտավորությունների համար:
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ բաժնետերերը ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ պարտավորությունների համար պատասխանատվություն չեն կրում և իրենց պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաններում կրում են ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ գործունեության հետ կապված վնասների ռիսկը:
- 1.7 Եթե ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ անվճարունակության (սնանկացման) պատճառ են հանդիսանում բաժնետերերի կամ այլ անձանց գործողությունները (անգործությունը), որոնք ունեն ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ կատարման համար պարտադիր ցուցումներ տալու կամ այլ կերպ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ գործունեությունը կանխորոշելու իրավունք, նշված բաժնետերերի կամ այլ անձանց վրա կարող է դրվել լրացուցիչ պատասխանատվություն՝ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ պարտավորությունների չափով:
- 1.8 Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները պատասխանատվություն չեն կրում ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ պարտավորությունների համար: ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ

պատասխանատվություն չի կրում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պարտավորությունների համար:

1.9 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ լրիվ ֆիրմային անվանումն է՝

*հայերեն՝ «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ*

*ռուսերեն՝ СТРАХОВОЕ ЗАКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО «ИНГО
АРМЕНИЯ»*

անգլերեն՝ “INGO ARMENIA” INSURANCE CLOSED JOINT-STOCK COMPANY

1.10 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ կրճատ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ

ռուսերեն՝ СЗАО «ИНГО АРМЕНИЯ»

անգլերեն՝ “INGO ARMENIA” ICJSC

1.11 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ գտնվելու վայրի հասցեն է՝

**0010, Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Հանրապետության 51, 53,
տարածք 47, 48, 50:**

2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՅ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ,
ԴԱՍԵՐԸ ԵՎ ԱՅԼ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԸ

2.1 ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ կարող է իրականացնել ապահովագրություն ոչ կյանքի
ապահովագրություն տեսակի հետևյալ դասերով.

2.1.1 Դժբախտ պատահարներից ապահովագրություն,

2.1.2 Առողջության ապահովագրություն,

2.1.3 Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն (բացառությամբ
երկաթուղային տրանսպորտի),

2.1.4 օդանավերի (նաև՝ բեռնափոխադրող) օգտագործումից բխող
պատասխանատվության ապահովագրություն,

2.1.5 Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն,

2.1.6 Հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն,

2.1.7 Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն,

2.1.8 Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների (նաև՝ բեռնափոխադրող)
օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն,

2.1.9 Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն,

- 2.1.10 Երաշխիքի տրամադրում,
- 2.1.11 Ֆինանսական վնասների ապահովագրություն,
- 2.1.12 Աջակցության ապահովագրություն,
- 2.1.13 Օդանավերի ապահովագրություն,
- 2.1.14 Ջրային փոխադրամիջոցների ապահովագրություն,
- 2.1.15 Ջրային փոխադրամիջոցների (նաև՝ բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն:

**3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

- 3.1 ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ է: ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից կնքել պայմանագրեր, ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող: ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆ օւնի ինքնուրույն հաշվեկշիռ, կարող է օրենքով սահմանված կարգով բանկային հաշիվներ բացել ՀՀ և օտարերկրյա բանկերում ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ արտարժույթով:
- 3.2 ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ իրավունք չունի անցկացնել իր թողարկած բաժնետոմսերի բաց բաժանորդագրություն կամ անսահմանափակ թվով անձանց առաջարկել այլ կերպ ձեռք բերելու դրանք:
- 3.3 ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆ իրավունք ունի՝
 - 3.3.1 ՀՀ օրենսդրությամբ չարգելված բոլոր ձևերով ձեռք բերել գույք, այդ թվում արժեթղթեր, տիրապետել, օգտագործել ու տնօրինել դրանք և դրանցից ստացված եկամուտը,
 - 3.3.2 ինքնուրույն կազմավորել իր ֆինանսական միջոցները, այդ թվում փոխառու միջոցների ներգրավմամբ, ՀՀ-ում և այլ պետություններում ստանալ բանկային և առևտրական վարկեր, այդ թվում արտարժույթով,
 - 3.3.3 օրենսդրությամբ սահմանված կարգով իր անունից թողարկել և տարածել արժեթղթեր,
 - 3.3.4 ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել պայմանագրեր և կրել պարտավորություններ,
 - 3.3.5 ինքնուրույն ընտրել իր արտաքին տնտեսական գործունեության վարման կարգը, այն իրականացնել անմիջականորեն՝ առանց միջնորդի կամ այլ կազմակերպության միջոցով՝ նրա հետ մտնելով պայմանագրային հարաբերությունների մեջ,

- 3.3.6 ունենալ միջոցներ արտարժույթով, դրանք ստանալ որպես արտաքին տնտեսական գործունեության արդյունք և ՀՀ օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ձեռք բերել և ինքնուրույն տնօրինել, այդ թվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով վաճառել պետությանը, ձեռնարկություններին, կազմակերպություններին կամ քաղաքացիներին,
- 3.3.7 ինքնուրույն պլանավորել իր գործունեությունը, որոշել թողարկվող արտադրանքի, կատարվող աշխատանքների և մատուցվող ծառայությունների ծավալը, գները, իրենց մատակարարներին և արտադրանքը սպառողներին,
- 3.3.8 հիմնադրել իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող դուստր և կախյալ ընկերություններ և մասնակցել դրանցում,
- 3.3.9 ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ Իրավունք ունի սույն կանոնադրության դրույթների, ՀՀ Քաղաքացիական Օրենսգրքի, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ (մասնաճյուղեր, ներկայացուցչություններ և հիմնարկներ), ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ այլ պետությունների տարածքում:
- 3.4 ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ պարտավոր է՝
- 3.4.1 օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով վարել հաշվապահական հաշվառում և ներկայացնել վիճակագրական հաշվետվություն.
- 3.4.2 ապահովել ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ փաստաթղթերի (ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ կանոնադրության, գույքի նկատմամբ գույքային իրավունքները հաստատող փաստաթղթերի, ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ներքին փաստաթղթերի, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների կանոնակարգերի, տարեկան և միջանկյալ հաշվետվությունների, հաշվապահական հաշվառման փաստաթղթերի, կառավարման մարմինների նիստերի արձանագրությունների, ապահովագրական պայմանագրերի և վկայագրերի բնօրինակների, օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ փաստաթղթերի) պահպանումը,
- 3.4.3 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ բաժնետերերի թիվը օրենքով սահմանված քանակը գերազանցելու և մեկ տարվա ընթացքում այդ թիվը մինչև սահմանված քանակը չնվազեցնելու դեպքում վերակազմավորել բաց բաժնետիրական ընկերություն:

4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ

- 4.1 ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ունի կանոնադրական կապիտալ, որը հավասար է տեղաբաշխված բոլոր բաժնետոմսերի անվանական արժեքների գումարին:

- 4.2 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ կանոնադրական կապիտալը կազմում է 2,536,260,000 (երկու միլիարդ հինգ հարյուր երեսունվեց միլիոն երկու հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ, որը կազմված է 4,124 (չորս հազար հարյուր քսանչորս) հատ հասարակ (սովորական) բաժնետոմսից՝ յուրաքանչյուրը 615,000 (վեց հարյուր տասնհինգ հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով:
- 4.3 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ կանոնադրական կապիտալում մեկ բաժնետիրոջ՝ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի առավելագույն չափ չի սահմանվում:
- 4.4 ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ իրավունք ունի Բաժնետերերի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ որոշմամբ, բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու կամ լրացուցիչ բաժնետոմսեր թողարկելու միջոցով ավելացնել կանոնադրական հիմնադրամը, եթե նախկինում թողարկված բաժնետոմսերը լրիվ վճարվել են:
- 4.5 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ փաստացի համալրված կանոնադրական կապիտալի՝ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ գործունեության ընթացքում նվազեցումը դրա հաշվին շահութաբաժիններ բաշխելու կամ այլ ձևերով արգելվում է, բացառությամբ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքում նշված դեպքերի:

5. ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐ ԵՎ ԱՅԼ ԱՐԺԵԹՂԹԵՐ

- 5.1 ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ կարող է տեղաբաշխել՝
- 5.1.1 բաժնետոմսեր,
 - 5.1.2 պարտատոմսեր,
 - 5.1.3 օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված այլ արժեթղթեր:
- 5.2 ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ իրավունք ունի տեղաբաշխել սովորական, ինչպես նաև մի քանի ձևի արտոնյալ բաժնետոմսեր: ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ կողմից տեղաբաշխված արտոնյալ բաժնետոմսերի անվանական արժեքը չպետք է գերազանցի ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ կանոնադրական կապիտալի 25 տոկոսը:
- 5.3 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ բոլոր բաժնետոմսերը անվանական են: ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ կողմից թողարկված սովորական բաժնետոմսերի անվանական արժեքը պետք է լինի միևնույնը:
- 5.4 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ որոշակի տեսակի ամեն մի արտոնյալ բաժնետոմս ունի միևնույն անվանական արժեքը: ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ կողմից սահմանված կարգով և ժամկետներում թողարկում է հաստատագրված և (կամ) փոփոխական շահութաբաժնով, ինչպես նաև աշխատակցի արտոնյալ բաժնետոմսեր:
- 5.5 Բացառությամբ Օրենքով սահմանված դեպքերի, արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը չունեն ձայնի իրավունք ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ բաժնետերերի

- ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՒՄ (բացի ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ լուծարման կամ վերակազմակերպման հարցերի մասին քվեարկությունից):
- 5.6 Արտոնյալ բաժնետոմսերը կարող են փոխարինվել սովորական բաժնետոմսերով: Ընդ որում՝ փոխարինելու ժամանակ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ պետք է մարի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի նկատմամբ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ բոլոր պարտքերը:
- 5.7 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ բաժնետոմսերը տեղաբաշխվում են ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ բաժնետերերի ռեեստրում բաժնետիրոջ անձնական գրանցման տեսքով:

6. ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 6.1 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ յուրաքանչյուր սովորական բաժնետոմս տալիս է սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը միևնույն իրավունքներ:
- 6.2 Սովորական բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող յուրաքանչյուր բաժնետեր օրենքի և ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ կանոնադրության համաձայն իրավունք ունի՝
- 6.2.1 մասնակցել ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՒՄ՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով,
- 6.2.2 ֆինանսական տարվա ավարտից հետո 30 օրվա ընթացքում ներկայացնել առաջարկություններ բաժնետերերի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՒՄ օրակարգի վերաբերյալ, ինչպես նաև առաջարկել ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ և ներքին աուդիտի ղեկավարի կամ անդամների թեկնածուներ, եթե նա (կամ նրանք) հանդիսանում է ձայնի իրավունք ունեցող բաժնետոմսերի առնվազն 2 տոկոսի սեփականատեր.
- 6.2.3 մասնակցել ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ կառավարմանը,
- 6.2.4 ստանալ շահութաբաժիններ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ գործունեությունից առաջացած շահույթից,
- 6.2.5 օգտվել ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերի ձեռքբերման իր նախապատվության իրավունքից,
- 6.2.6 ստանալ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ գործունեության վերաբերյալ օրենքով սահմանված տեղեկատվություն, այդ թվում՝ ծանոթանալ հաշվապահական հաշվեկշռին և հաշվետվություններին (սույն տեղեկատվությունը ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ բաժնետերերին տրվում է անվճար՝ նրանց գրավոր դիմումների հիման վրա, եռօրյա ժամկետում),
- 6.2.7 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի առնվազն 5 տոկոսի սեփականատեր հանդիսացող բաժնետերերի պահանջով կարող է իրականացվել ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ֆինանսատնտեսական գործունեության ստուգումը աուդիտորի կողմից: Այդ դեպքում աուդիտորի ծառայությունները վճարվում են ստուգում պահանջող բաժնետերերի կողմից:

- 6.2.8 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ բաժնետերերի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՒՄ իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի,
 - 6.2.9 հանդես գալ առաջարկություններով ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ բաժնետերերի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՒՄ,
 - 6.2.10 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ բաժնետերերի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՒՄ քվեարկել իրեն պատկանող վճարված բաժնետոմսերի ձայների չափով,
 - 6.2.11 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ միջոցների հաշվին կանոնադրական կապիտալի մեծացման դեպքում անվճար ստանալ համապատասխան քանակի սովորական բաժնետոմսեր,
 - 6.2.12 հայցով դիմել դատարան ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ բաժնետերերի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՒՄ կողմից ընդունված և գործող օրենքներին և այլ իրավական ակտերին հակասող որոշումների գանգատարկման նպատակով,
 - 6.2.13 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ լուծարման դեպքում ստանալ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ գույքի իրեն հասանելիք մասը,
 - 6.2.14 օգտվել օրենքով և ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից:
- 6.3 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ բաժնետերերը ունեն իրենց սեփականությունը հանդիսացող բաժնետոմսերը օտարելու կամ այլ՝ օրենքով չարգելված ձևով այլ անձանց փոխանցելու իրավունք: Ընդ որում՝ մյուս բաժնետերերը ունեն այդ բաժնետոմսերը նույն գնով ձեռք բերելու նախապատվության իրավունք: Բաժնետերերի կողմից իրենց վաճառվող բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքը չիրականացնելու դեպքում ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ինքը ունի այդ բաժնետոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունք: Բաժնետերերի կամ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ այդպիսի բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքի իրականացման ժամկետը սահմանվում է 30 օր: ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ բաժնետոմսերի շուկայական արժեքի որոշման անհրաժեշտության դեպքում հաշվի է առնվում ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ զուտ ակտիվների մեծությունը: Այդ դեպքում կողմերից որևէ մեկի պահանջով պետք է բաժնետոմսերի արժեքը սահմանվի անկախ գնահատողի (աուդիտի) կողմից:
- 6.4 Սովորական բաժնետոմսերի տեսակարար կշիռը ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ կանոնադրական կապիտալում չպետք է պակաս լինի 75 տոկոսից:
- 6.5 Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը իրավունք ունեն՝
- 6.5.1 մասնակցել ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ կառավարմանը,
 - 6.5.2 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՒՄ իրենց իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի,
 - 6.5.3 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ լուծարման դեպքում ստանալ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ գույքի իրենց հասանելիք մասը,

- 6.5.4 ստանալ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն՝ գաղտնի փաստաթղթերից բացի, այդ թվում՝ կանոնադրությամբ սահմանված կարգով ծանոթանալ հաշվապահական հաշվեկշիռներին, հաշվետվություններին, ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ արտադրատնտեսական գործունեությանը,
- 6.5.5 դիմել դատարան՝ ժողովի կողմից ընդունված եւ գործող օրենքներին ու այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով,
- 6.5.6 մասնակցել ժողովին՝ արտոնյալ բաժնետերերի՝ օրենքով սահմանված իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով,
- 6.5.7 հանդես գալ առաջարկություններով ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ բաժնետերերի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՒՄ,
- 6.5.8 ստանալ շահութաբաժիններ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ գործունեությունից առաջացած շահույթից,
- 6.5.9 առաջնահերթ կարգով ձեռք բերել ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը,
- 6.5.10 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ լուծարման դեպքում ստանալ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ գույքի իր հասանելիք մասը,
- 6.5.11 վերջին հինգ ենթակետերով սահմանված իրենց իրավունքներից արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը օգտվում են «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 38 հոդվածի դրույթներին համապատասխան:
- 6.6 Բաժնետերերը պարտավոր են՝
- 6.6.1 կանոնադրությամբ սահմանված կարգով կատարել դրամական և գույքային ներդրումներ,
- 6.6.2 իրականացնել օրենքով իրենց վերապահված այլ պարտականություններ:
7. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ, ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ԾԱԾԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՇԱՀԱԲԱԺԻՆՆԵՐԸ
- 7.1 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ շահույթը գոյանում է նրա գործունեությունից ստացած հասույթից՝ գործառնական, աշխատանքի վարձատրության և այլ ծախսերը հանելուց հետո:
- 7.2 ՀՀ օրենսդրությանը համապատասխան բյուջեի հանդեպ պարտավորությունները կատարելուց հետո շահույթը ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ զարգացման նպատակով կարող է թողնվել որպես չբաշխված շահույթ կամ ուղղվել ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ կանոնադրական նպատակների իրագործմանը:
- 7.3 ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱՎՈՆՔ ՈՒՆԻ ՈՐՈՇՈՒՄ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ (հայտարարելու) իր մասնակիցներին եռամսյակային, կիսամսյակային կամ տարեկան շահութաբաժինների բաշխման կամ վճարման մասին, եթե դրա վճարումը չի

- հակասում «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի պահանջներին:
- 7.4 Շահաբաժինները վճարվում են ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ տվյալ տարվա զուտ շահույթից, որոշակի ձևի արտոնյալ բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինները կարող են վճարվել այդ նպատակի համար հատուկ ստեղծված ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ կապիտալի միջոցներից:
- 7.5 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ տվյալ տարվա գործունեության արդյունքների հիման վրա սովորական բաժնետոմսերի տարեկան շահութաբաժինն արտոնյալ բաժնետոմսերի համար սահմանված շահութաբաժինը գերազանցելու դեպքում արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ բաժնետերերի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ որոշմամբ կարող են ստանալ սովորական բաժնետոմսերին հասանելիք փաստացի շահութաբաժնի չափով շահութաբաժին:
- 7.6 Ըստ բաժնետոմսերի տեսակների և ձևերի՝ միջանկյալ (եռամսյակային և կիսամսյակային) շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունվում է ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ կողմից:
- 7.7 Ըստ բաժնետոմսերի տեսակների և ձևերի՝ տարեկան շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունվում է ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ բաժնետերերի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ կողմից՝ ԽՈՐՀՐԴԻ առաջարկությամբ:
- 7.8 Տարեկան շահութաբաժինների չափը չի կարող արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից պակաս լինել:
- 7.9 Եթե ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ բաժնետերերի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափը՝ ըստ բաժնետոմսերի առանձին տեսակների և ձևերի, սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափին հավասար, այդ տեսակների և ձևերի բաժնետոմսերի դիմաց տարեկան շահութաբաժիններ չեն վճարվում:
- 7.10 Եթե ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափը՝ ըստ բաժնետոմսերի առանձին տեսակների և ձևերի, սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից ավելի, ապա այդ տեսակների և ձևերի բաժնետոմսերի դիմաց տարեկան շահութաբաժինները վճարվում են սահմանված տարեկան շահութաբաժնի և տվյալ տարում արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների գումարի տարբերությամբ:
- 7.11 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ բաժնետերերի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ իրավունք ունի որոշում ընդունել առանձին տեսակների և ձևերի բաժնետոմսերի դիմաց շահութաբաժիններ չվճարելու կամ ոչ լրիվ չափով վճարելու մասին: Այդ որոշումների գործունեության ժամկետը սահմանվում է ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ բաժնետերերի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ կողմից, բայց չի կարող մեկ տարուց ավելի լինել:

- 7.12 Տարեկան շահութաբաժինների վճարման ամսաթիվը սահմանվում է ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ բաժնետերերի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ տարեկան շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ: Միջանկյալ շահութաբաժինների վճարման ամսաթիվը սահմանվում է ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ՝ միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ, բայց ոչ շուտ, քան տվյալ որոշման ընդունման պահից 30 օր անց:
- 7.13 Շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ կազմում է շահութաբաժինների ստանալու իրավունք ունեցող բաժնետերերի ցանկ, որում պետք է ընդգրկվեն՝
- 7.13.1 միջանկյալ շահութաբաժիններ վճարելու դեպքում՝ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ բաժնետերերը, որոնք ընդգրկվել են ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ բաժնետերերի ռեեստրում ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ տնօրենների ԽՈՐՀՐԴԻ՝ միջանկյալ շահութաբաժինների վճարելու մասին որոշման կայացման օրվանից առնվազն 10 օր առաջ.
- 7.13.2 տարեկան շահութաբաժիններ վճարելու դեպքում՝ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ բաժնետերերը, որոնք ընդգրկվել են ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ բաժնետերերի ռեեստրում ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ բաժնետերերի տարեկան ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ:
- 7.14 Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր բաժնետերերին շահութաբաժինների վճարման առանձնահատկություններն են.
- 7.14.1 Յուրաքանչյուր ձևի արտոնյալ բաժնետոմսի դիմաց վճարվող շահութաբաժինը և լուծարային արժեքը (որը վճարվում է ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ լուծարման ժամանակ) սահմանվում են ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ կողմից դրամական գումարի տեսքով կամ որպես տոկոսադրույք արտոնյալ բաժնետոմսի անվանական արժեքի նկատմամբ:
- 7.14.2 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ տվյալ տարվա գործունեության արդյունքների հիման վրա սովորական բաժնետոմսերի տարեկան շահութաբաժինն արտոնյալ բաժնետոմսերի համար շահութաբաժինը գերազանցելու դեպքում արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ բաժնետերերի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ որոշմամբ, կարող են ստանալ սովորական բաժնետոմսերի հասանելիք փաստացի շահութաբաժինը:
- 7.14.3 Եթե ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ որոշմամբ թողարկվում և տեղաբաշխվում են 2 կամ ավելի ձևի արտոնյալ բաժնետոմսեր, ապա պետք է սահմանվի նաև շահութաբաժինների և լուծարային արժեքի վճարման հերթականությունը:
- 7.14.4 Երեք հաջորդական տարիների ընթացքում արտոնյալ բաժնետոմսերին հասանելիք շահութաբաժնի չվճարելը կարող է հիմք հանդիսանալ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ դատական կարգով լուծարման համար:

- 7.15 ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆ Իրավունք չունի հայտարարել (որոշում ընդունել) տեղաբաշխված բաժնետոմսերի շահութաբաժինների վճարման մասին, եթե՝
- 7.15.1 լրիվ չի վճարվել ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ կանոնադրական կապիտալը.
 - 7.15.2 շահութաբաժիններ վճարելու որոշումն ընդունելու պահի դրությամբ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ տնտեսական վիճակը համապատասխանում է օրենքով սահմանված անվճարունակության (սնանկացման) հայտանիշներին, կամ նշված հայտանիշները ի հայտ կգան շահութաբաժինների վճարման հետևանքով.
 - 7.15.3 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ զուտ ակտիվների արժեքը փոքր է ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ կանոնադրական կապիտալի և պահուստային կապիտալի գումարից կամ այդ գումարից փոքր կդառնա շահութաբաժինների վճարման հետևանքով,
 - 7.15.4 «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված այլ դեպքերում:
- 7.16 ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆ Իրավունք չունի որոշում ընդունել շահութաբաժինների վճարման մասին տեղաբաշխված սովորական բաժնետոմսերի դիմաց, որոնց համար սահմանված չէ շահութաբաժնի չափը, եթե որոշում չի ընդունված շահութաբաժիններ վճարել արտոնյալ բաժնետոմսերի բոլոր այն ձևերի դիմաց, որոնց համար վճարվող շահութաբաժնի չափը սահմանված է:
- 7.17 ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆ Իրավունք չունի որոշում ընդունել շահութաբաժինների վճարման մասին տեղաբաշխված այն արտոնյալ բաժնետոմսերի դիմաց, որոնց համար շահութաբաժնի չափը սահմանված է, եթե որոշում չի ընդունված շահութաբաժիններ վճարել արտոնյալ բաժնետոմսերի բոլոր այն ձևերի դիմաց, որոնք վերոհիշյալ արտոնյալ բաժնետոմսերի նկատմամբ շահութաբաժիններ ստանալու առաջնության իրավունք են տալիս:
- 7.18 ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆՈՒՄ ստեղծվում է պահուստային կապիտալ՝ կանոնադրական կապիտալի առնվազն 15 տոկոսի չափով: Եթե պահուստային կապիտալը կազմում է կանոնադրությամբ սահմանված չափից ավելի փոքր մեծություն, ապա հատկացումներն այդ կապիտալին կատարվում են շահույթից առնվազն 5 տոկոսի չափով: Պահուստային կապիտալը օգտագործվում է կորուստները ծածկելու, ինչպես նաև պարտատոմսերը մարելու և բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ շահույթը և այլ միջոցները դրա համար չեն բավարարում: Պահուստային կապիտալը չի կարող օգտագործվել այլ նպատակների համար:
- 7.19 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ կորուստները կարող են ծածկվել ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆՈՒՄ ստեղծված հիմնադրամների (այդ թվում պահուստային), ինչպես նաև ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ չբաշխված շահույթի հաշվին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն Կանոնադրությամբ սահմանված կարգով:

8. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

- 8.1 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ կառավարման մարմիններն են՝
- 8.1.1 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ բաժնետերերի ընդհանուր ժողովը (այսուհետև՝ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ),
 - 8.1.2 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ խորհուրդը (այսուհետև՝ ԽՈՐՀՈՒՐԴ),
 - 8.1.3 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ գործադիր մարմինը՝ տնօրինությունը (այսուհետև՝ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ):
- 8.2 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ և ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆԸ վարում են ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ գործունեությունը սույն կանոնադրությամբ իրենց տրված լիազորությունների շրջանակներում:
- 8.3 ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆ ռենի գլխավոր հաշվապահ, պատասխանատու ակտուար և ներքին աուդիտի ստորաբաժանում:

9. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

- 9.1 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ կառավարման բարձրագույն մարմինն է, որը կազմված է բաժնետերերից և նրանց պատվիրակներից:
- 9.2 Բաժնետերերի որոշումները կայացվում են ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՒՄ:
- 9.3 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԵՐԸ գումարվում են ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ կենտրոնական գրասենյակում կամ որևէ այլ տեղ, որը նշված է ժողովի հրավերում:
- 9.4 ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ պարտավոր է ամեն տարի գումարել ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ: ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ բաժնետերերի հիմնադիր ժողովը համարվում է նրա առաջին տարեկան ժողովը:
- 9.5 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողովը գումարվում է հերթական ֆինանսական տարվա ավարտից 2 ամիս հետո 3 ամսվա ընթացքում:
- 9.6 Բաժնետերերի տարեկան ժողովից բացի գումարվող ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԵՐԸ համարվում են արտահերթ: ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ արտահերթ ժողովներ գումարվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար:
- 9.7 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ բացառիկ իրավասությանն են պատկանում՝
- 9.7.1 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը,
 - 9.7.2 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ վերակազմակերպումը,
 - 9.7.3 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ լուծարումը,
 - 9.7.4 Ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը,

- 9.7.5 ԽՈՐՀՐԴԻ քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: ԽՈՐՀՐԴԻ քանակական կազմի հաստատման և դրա անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԵՐՈՒՄ: ԽՈՐՀՐԴԻ անդամների ընտրության հարցն արտահերթ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՒՄ կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել ԽՈՐՀՐԴԻ կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին,
- 9.7.6 ԽՈՐՀՐԴԻ ներկայացմամբ՝ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ արտաքին աուդիտն իրականացնող անձի հաստատումը,
- 9.7.7 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ տարեկան ֆինանսական հաշվետվությունների, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը,
- 9.7.8 Բաժնետոմսերի համախմբումն ու բաժանումը,
- 9.7.9 ԽՈՐՀՐԴԻ անդամների վարձատրության կամ փոխհատուցման չափի սահմանումը,
- 9.7.10 Օրենքով նախատեսված դեպքերում բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը,
- 9.7.11 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ վարման կարգի հաստատումը,
- 9.7.12 Դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը,
- 9.7.13 Դուստր կամ կախյալ ընկերություններին մասնակցությունը,
- 9.7.14 Իրավաբանական անձանց միությունների հիմնադիր հանդես գալը,
- 9.7.15 Իրավաբանական անձանց միություններին մասնակցությունը,
- 9.7.16 Օրենքով նախատեսված այլ հարցերով որոշումների ընդունումը:
- 9.8 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ բացառիկ իրավասությանը պատկանող հարցերը չեն կարող փոխանցվել ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ կառավարման այլ մարմիններին: ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ չի կարող քննարկել և որոշումներ ընդունել իր իրավասությանը չվերաբերվող հարցերի վերաբերյալ:
- 9.9 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ որոշումները կարող են նաև ընդունվել հեռակա քվեարկության (հարցման) միջոցով, բացառությամբ սույն կանոնակարգի 9.7.2, 9.7.3 և 9.7.7 կետերում նշված հարցերի: Տարեկան ընդհանուր ժողովը չի կարող անցկացվել հեռակա կարգով քվեարկության (հարցման) միջոցով:
- 9.10 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ որոշումները կարող են ընդունվել այնպիսի նիստով, որի ժամանակ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ մասնակիցները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային, հեռուստակապի կամ այլ կապի միջոցով՝ իրական ժամանակի ռեժիմում: Նման նիստը հեռակա (հարցման) կարգով անցկացված նիստ չի համարվում:

- 9.11 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ մասնակցելու իրավունք ունեն՝
- 9.11.1 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող մասնակիցները՝ իրենց պատկանող ձայների քանակով, ինչպես նաև ձայնի իրավունք տվող մասնակցության անվանատերերը,
 - 9.11.2 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը իրենց պատկանող արտոնյալ բաժնետոմսերի քանակին և անվանական արժեքին համապատասխան ձայների քանակով, ինչպես նաև այդ բաժնետոմսերի անվանատերերը օրենքով սահմանված դեպքերում և կարգով,
 - 9.11.3 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ մասնակից չհանդիսացող ԽՈՐՀՐԴԻ և գործադիր մարմնի անդամները՝ խորհրդակցական ձայնի իրավունքով,
 - 9.11.4 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ներքին աուդիտի ստորաբաժանման անդամները՝ որպես դիտորդներ,
 - 9.11.5 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ արտաքին աուդիտն իրականացնող անձը՝ որպես դիտորդ (եթե նրա եզրակացությունն առկա է գումարվող ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ օրակարգի հարցերում),
 - 9.11.6 Պատասխանատու ակտուարը՝ որպես դիտորդ (եթե նրա եզրակացությունն առկա է գումարվող ընդհանուր ժողովի օրակարգի հարցերում),
 - 9.11.7 Կենտրոնական բանկի լիազորած պաշտոնատար անձինք,
 - 9.11.8 Այլ անձինք՝ անհրաժեշտության դեպքում:
- 9.12 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ մասնակցելու իրավունք ունեցող ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ բաժնետերերի ցուցակը կազմում է ԽՈՐՀՐԴԻ կողմից սահմանված տարվա, ամսվա, ամսաթվի դրությամբ՝ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա:
- 9.13 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ մասնակցելու իրավունք ունեցող ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը չեն կարող սահմանվել ավելի վաղ, քան ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ գումարելու մասին որոշման ընդունումը և ավելի ուշ, քան ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ գումարումից 45 օր առաջ:
- 9.14 Եթե ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ գումարվում է հեռակա քվեարկությամբ, ապա դրան մասնակցելու իրավունք ունեցող ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը սահմանվում են ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ գումարման օրվանից առնվազն 35 օր շուտ:
- 9.15 ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ անցկացման մասին Կենտրոնական բանկին ծանուցում է դրա անցկացումից ոչ ուշ, քան 15 օր առաջ:
- 9.16 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ մասնակցելու իրավունք ունեցող ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ բաժնետերերի ցուցակը պետք է տվյալներ պարունակի ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ յուրաքանչյուր բաժնետիրոջ անվան (անվանման), գտնվելու (բնակության) վայրի և

- ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ կանոնադրական կապիտալում նրան պատկանող մասնակցության մասին՝ ըստ բաժնետոմսերի տեսակների և դասերի:
- 9.17 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ մասնակցելու իրավունք ունեցող ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ բաժնետերերի ցուցակը պետք է ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ անցկացումից առնվազն 10 օր առաջ տրամադրվի ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ այն բաժնետերերին, որոնք գրանցված են ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ բաժնետերերի ռեեստրում:
- 9.18 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ բաժնետիրոջ պահանջով ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ պարտավոր է նրան տրամադրել տեղեկանք ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակում նրա ընդգրկման մասին:
- 9.19 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ մասնակցելու իրավունք ունեցող ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ բաժնետերերի ցուցակում փոփոխություններ կարող են կատարվել միայն ցուցակը կազմելու ընթացքում թույլ տրված սխալներն ուղղելու կամ դրանում չընդգրկված՝ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ բաժնետերերի խախտված իրավունքները և օրինական շահերը վերականգնելու նպատակով:
- 9.20 Բաժնետերերի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, իրավասու է (քվորում ունի), եթե նրա աշխատանքներին մասնակցում են (ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահի դրությամբ) ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ձայնի իրավունք տվող տեղաբաշխված բաժնետոմսերի 50 տոկոսը տնօրինող բաժնետերեր:
- 9.21 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ որոշումները ընդունվում են ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, եթե Օրենքով այլ բան նախատեսված չէ:

10. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

- 10.1 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ իրականացնում է ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ գործունեության ընդհանուր ղեկավարումը, օրենքով ԽՈՐՀՐԴԻ իրավասությանը վերապահված հարցերի սահմաններում:
- 10.2 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ կազմված է առնվազն 5 (հինգ) և ոչ ավել, քան 7 (յոթ) անդամից, որոնք ընտրվում են մեկ տարի ժամկետով:
- 10.3 ԽՈՐՀՐԴԻ անդամներն ընտրվում են տարեկան ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՒՄ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ներկա բաժնետերերի կողմից, իսկ ԽՈՐՀՐԴԻ անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում՝ արտահերթ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՒՄ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ներկա բաժնետերերի կողմից՝ օրենքով և ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ կանոնադրությամբ սահմանված կարգով:
- 10.4 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ ԽՈՐՀՐԴԻ անդամների թեկնածուների վերաբերյալ առաջարկություններ կարող են ներկայացնել ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ բաժնետերերը,

ինչպես նաև ԽՈՐՀՈՒՐԴԸ (բացառությամբ առաջին անգամ ԽՈՐՀՐԴԻ ձևավորման դեպքի):

- 10.5 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ այն բաժնետերերը, որոնք ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին, իրավունք ունեն առանց ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ընտրության ընդգրկվելու ԽՈՐՀՐԴԻ կազմում կամ դրանում նշանակելու իրենց ներկայացուցչին:
- 10.6 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ այն բաժնետերերը, որոնք ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի մինչև 10 տոկոսին, կարող են միավորվել և ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսը համալրելու դեպքում առանց ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ կողմից ընտրության ընդգրկել իրենց ներկայացուցչին ԽՈՐՀՐԴԻ կազմում:
- 10.7 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ բոլոր այն բաժնետերերը, որոնք ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի մինչև 10 տոկոսին, սակայն չեն միավորվել 10.6 կետում նշված կարգով ԽՈՐՀՐԴԻ կազմում իրենց ներկայացուցչին ընդգրկելու համար, կարող են իրենց միասնական ներկայացուցչին ընտրել և ընդգրկել ԽՈՐՀՐԴԻՄ՝ առանց ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ կողմից ընտրության: Այդ ներկայացուցչի ընտրությանը մասնակցում են միայն սույն կետով նախատեսված բաժնետերերը, թեկուզ նրանց թիվը լինի մեկ, իսկ միասնական ներկայացուցչին ընտրվում է ընտրողների ծայների պարզ մեծամասնությամբ: Սույն կետով նախատեսված բաժնետերերը նշված կարգով միասնական ներկայացուցչի ընտրելու դեպքում պետք է այդ մասին գրավոր տեղեկացնեն ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ բոլոր մասնակիցներին՝ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ կայացման օրվանից առնվազն 30 օր առաջ:
- 10.8 ԽՈՐՀՐԴԻ այն անդամները, որոնք չեն ընտրվում սույն կանոնադրության 10.5-10.7 կետերի համաձայն, ընտրվում են ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ տարեկան ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՒՄ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ներկա բաժնետերերի կողմից, իսկ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում՝ արտահերթ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՒՄ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ներկա բաժնետերերի կողմից՝ ընտրողների ծայների պարզ մեծամասնությամբ:
- 10.9 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ ԽՈՐՀՐԴԻ անդամի թեկնածուների վերաբերյալ առաջարկություն կարող են անել ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ բաժնետերերը, ինչպես նաև ԽՈՐՀՈՒՐԴԸ (բացառությամբ առաջին անգամ ԽՈՐՀՐԴԻ ընտրության դեպքի):
- 10.10 ԽՈՐՀՐԴԻ անդամները չպետք է միմյանց հետ փոխկապակցված լինեն: ԽՈՐՀՐԴԻ անդամները և ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ գործադիր մարմնի անդամները չեն կարող լինել միմյանց հետ փոխկապակցված անձինք:

- 10.11 ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ պարտավոր է ԽՈՐՀՐԴԻ սահմանած կարգով և պայմաններով վարձատրել կամ փոխհատուցել ԽՈՐՀՐԴԻ անդամներին՝ նրանց կատարած աշխատանքի կամ պաշտոնավարման համար:
- 10.12 ԽՈՐՀՐԴԻ նախագահը ընտրվում է ԽՈՐՀՐԴԻ կողմից ԽՈՐՀՐԴԻ անդամների կազմից: ԽՈՐՀՐԴԻ նախագահը՝
- 10.12.1 կազմակերպում է ԽՈՐՀՐԴԻ աշխատանքները,
 - 10.12.2 գումարում և նախագահում է ԽՈՐՀՐԴԻ նիստերը,
 - 10.12.3 կազմակերպում է ԽՈՐՀՐԴԻ նիստերի արձանագրությունների վարումը,
 - 10.12.4 նախագահում է ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՒՄ,
 - 10.12.5 կազմակերպում է ԽՈՐՀՐԴԻՆ կից հանձնաժողովների աշխատանքները:
- 10.13 ԽՈՐՀՐԴԻ իրավասություններն են՝
- 10.13.1 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ներառյալ՝ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ հեռանկարային զարգացման և գործարար ծրագրերի հաստատումը,
 - 10.13.2 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ տարեկան և արտահերթ նիստերի գումարումը, օրակարգի հաստատումը, ինչպես նաև դրանց գումարման և անցկացման կազմակերպման հետ կապված նախապատրաստական աշխատանքների իրականացման ապահովումը,
 - 10.13.3 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ գործադիր մարմնի անդամների, պատասխանատու ակտուարի, ակտուարային ստորաբաժանման աշխատակիցների նշանակումը, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը,
 - 10.13.4 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ներքին հսկողության ստանդարտների սահմանումը, ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ներքին աուդիտի ղեկավարի և անդամների նշանակումը, ներքին աուդիտի տարեկան աշխատանքային ծրագրի հաստատումը, ներքին աուդիտի ղեկավարի և անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը,
 - 10.13.5 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ տարեկան ծախսերի նախահաշվի ու կատարողականի հաստատումը,
 - 10.13.6 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ կազմակերպական կառուցվածքի և աշխատատեղերի հաստատումը,
 - 10.13.7 շահութաբաժինների վճարման վերաբերյալ ընդհանուր ժողովին առաջարկությունների ներկայացումը, այդ թվում՝ շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ բաժնետերերի ցուցակի կազմումը, որում պետք է ընդգրկվեն ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ բաժնետերերի ռեեստրում՝ տարեկան ԸՆԴՀԱՆՈՒՐ

- ԺՈՂՈՎԻՆ մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ,
- 10.13.8 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատումը և ընդհանուր ժողովին ներկայացումը,
- 10.13.9 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ արտաքին աուդիտն իրականացնող անձին ընդհանուր ժողովի հաստատմանը ներկայացնելը,
- 10.13.10 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ արտաքին աուդիտն իրականացնող անձին վճարման չափի սահմանումը,
- 10.13.11 ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ իրականացված աուդիտորական կամ այլ ստուգումներից բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների նախաձեռնումն ու դրանց իրականացման վերահսկումը,
- 10.13.12 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ կողմից ապահովագրական գործունեության իրականացման կարգը սահմանող ներքին իրավական ակտերի (ներքին կանոնակարգերի) ընդունումը,
- 10.13.13 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ տարածքային և ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունների հաստատումը, ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների միջև գործառութային պարտականությունների բաշխումը,
- 10.13.14 սույն կանոնադրության 9.7.2, 9.7.9 և 9.7.12-9.7.15 կետերով նախատեսված հարցերի ներկայացումն ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ քննարկմանը,
- 10.13.15 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխման մասին որոշման ընդունումը,
- 10.13.16 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը,
- 10.13.17 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծումը,
- 10.13.18 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ հաշվապահական հաշվառման քաղաքականության՝ հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու նպատակով կիրառվող սկզբունքների, հիմունքների, եղանակների, կանոնների, ձևերի և ներքին իրավական ակտերի սահմանումը,
- 10.13.19 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ներդրումային քաղաքականության սահմանումը,
- 10.13.20 անշարժ գույքի ուղղակի և անուղղակի ձեռքբերման և (կամ) օտարման հետ կապված մեկ կամ մի քանի փոխկապակցված գործարքներին նախնական հավանություն տալը,
- 10.13.21 այլ տնտեսվարող սուբյեկտների կապիտալում բաժնետոմսերի (փայերի) ձեռքբերման և (կամ) օտարման հետ կապված մեկ կամ մի քանի փոխկապակցված գործարքներին նախնական հավանություն տալը,
- 10.13.22 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ակտիվների գումարի 1%-ը գերազանցող արժեք ունեցող գույքի ուղղակի և անուղղակի ձեռքբերման և (կամ) օտարման հետ կապված

- մեկ կամ մի քանի փոխկապակցված գործարքներին նախնական հավանություն տալը,
- 10.13.23 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ կողմից տրամադրվող փոխառության պայմանագրերի կնքմանը հավանություն տալը,
- 10.13.24 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ գործադիր տնօրենի անմիջական ղեկավարության տակ գտնվող առանձնացված ստորաբաժանումների ղեկավարների թեկնածությունների նախնական հավանություն տալը, ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ գործադիր տնօրենի անմիջական ղեկավարության տակ գտնվող առանձնացված ստորաբաժանումների ղեկավարների աշխատանքային պայմանագրերի էական պայմաններին, ինչպես նաև այդ պայմանների փոփոխությանը և այդպիսի պայմանագրերի խզմանը նախնական հավանություն տալը,
- 10.13.25 ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ անդամների մոտիվացիոն համակարգի (բոնուսների և պարգևավճարների), ինչպես նաև՝ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ գործադիր տնօրենի և ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ անդամների ամենամյա մոտիվացիոն վճարների (բոնուսների և պարգևավճարների) սահմանումը,
- 10.13.26 օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ որոշումների ընդունումը:
- 10.14 ԽՈՐՀՐԴԻ նիստերը պետք է գումարվեն առնվազն եռամսյակը մեկ անգամ:
- 10.15 ԽՈՐՀՐԴԻ նիստերը գումարում է ԽՈՐՀՐԴԻ նախագահը՝ իր, ԽՈՐՀՐԴԻ անդամի, ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ գործադիր տնօրենի, ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի, ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ արտաքին աուդիտի իրականացնող անձի, Կենտրոնական բանկի, ինչպես նաև ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ քվեարկող բաժնետոմսերի 5 կամ ավելի տոկոս ունեցող բաժնետիրոջ (բաժնետերերի) գրավոր պահանջով:
- 10.16 ԽՈՐՀՐԴԻ նիստերը կարող են գումարվել հեռակա կարգով՝ սույն կանոնադրությամբ և ԽՈՐՀՐԴԻ գործունեության կանոնակարգով սահմանված՝ նիստերի գումարման և անցկացման կարգի համաձայն: ԽՈՐՀՈՒՐԴԸ կարող է որոշումներ ընդունել այնպիսի նիստում, որի ժամանակ ԽՈՐՀՐԴԻ նիստի բոլոր մասնակիցները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային կապի, հեռուստակապի կամ կապի այլ միջոցներով իրական ժամանակի ռեժիմում: Նման նիստը հեռակա (հարցման) կարգով անցկացված նիստ չի համարվում:
- 10.17 Սույն կանոնադրության 10.13.3, 10.13.4, 10.13.9 և 10.13.13 կետերում նշված, ինչպես նաև ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ հեռանկարային զարգացման կամ գործարար ծրագրի հաստատումը, ԽՈՐՀՐԴԻ նախագահի ընտրության հարցերը չեն կարող լուծվել ԽՈՐՀՐԴԻ հեռակա նիստերի ժամանակ:
- 10.18 ԽՈՐՀՐԴԻ նիստերի քվորումը ապահովվում է, երբ ներկա են ԽՈՐՀՐԴԻ անդամների կեսից ավելին: ԽՈՐՀՐԴԻ որոշումները ընդունվում են նիստին ներկա

մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:

- 10.19 Քվեարկության ժամանակ ԽՈՐՀՐԴԻ յուրաքանչյուր անդամ ունի միայն մեկ ձայնի իրավունք: Ձայնի իրավունքի փոխանցումն այլ անձի (ներառյալ՝ ԽՈՐՀՐԴԻ այլ անդամի) արգելվում է: Ձայների հավասարության դեպքում ԽՈՐՀՐԴԻ նախագահի ձայնը որոշիչ է:
- 10.20 ԽՈՐՀՐԴԻ նիստերի բոլոր հարցերի քննարկումը կարող է տեղի ունենալ միայն գործադիր տնօրենի պարտադիր մասնակցությամբ, բացառությամբ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ գործադիր տնօրենի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման, ինչպես նաև նրա վարձատրության պայմանների վերաբերյալ հարցերի: Գործադիր տնօրենը ԽՈՐՀՐԴԻ նիստերին մասնակցում է խորհրդակցական ձայնի իրավունքով:
- 10.21 ԽՈՐՀՐԴԻ նիստերն արձանագրվում են: Նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից հետո՝ 5-օրյա ժամկետում: Արձանագրությունում նշվում են.
 - 10.21.1 Նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը,
 - 10.21.2 Նիստին մասնակցած անձինք,
 - 10.21.3 Նիստի օրակարգը,
 - 10.21.4 Քվեարկության դրված հարցերը, ինչպես նաև քվեարկության արդյունքները՝ ըստ նիստին մասնակցած յուրաքանչյուր ԽՈՐՀՐԴԻ անդամի
 - 10.21.5 Քվեարկության դրված հարցերի վերաբերյալ ԽՈՐՀՐԴԻ անդամների և ԽՈՐՀՐԴԻ նիստին մասնակցող այլ անձանց կարծիքները
 - 10.21.6 Նիստում ընդունված որոշումները:
- 10.22 ԽՈՐՀՐԴԻ նիստի արձանագրությունն ստորագրում են նիստին մասնակցող բոլոր անդամները, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների ճշտության և հավաստիության համար:
- 10.23 ԽՈՐՀՐԴԻ նիստերը վարում է ԽՈՐՀՐԴԻ նախագահը, որը ստորագրում է նիստում ընդունված որոշումները: ԽՈՐՀՐԴԻ նախագահը պատասխանատվություն է կրում որոշման մեջ առկա տեղեկությունների հավաստիության համար:
- 10.24 ԽՈՐՀՈՒՐԴՆ իր աշխատանքն արդյունավետ կազմակերպելու նպատակով կարող է ստեղծել հանձնաժողովներ: Հանձնաժողովների իրավասությունները և գործունեության կարգը սահմանվում են ԽՈՐՀՐԴԻ որոշմամբ:
- 10.25 ԽՈՐՀՐԴԻՆ կից հանձնաժողովներում կարող են ընդգրկվել ԽՈՐՀՐԴԻ անդամները և ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ այլ ղեկավարներ կամ աշխատակիցներ:
- 10.26 ԽՈՐՀՐԴԻՆ կից հանձնաժողովների որոշումներն ունեն խորհրդակցական բնույթ:
- 10.27 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ կողմից ԽՈՐՀՐԴԻ անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են իր դիմումի համաձայն կամ եթե՝
 - 10.27.1 Նա դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

- 10.27.2 Նրա պաշտոնավարման ընթացքում ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց ուժով օրենքի համաձայն նրան արգելվում է լինել ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ղեկավար,
- 10.27.3 Մեկ տարվա ընթացքում բացակայել է ԽՈՐՀՐԴԻ նիստերի առնվազն 1/4-ից անհարգելի պատճառներով կամ ընդհանուր առմամբ (ներառյալ՝ հարգելի և անհարգելի բացակայությունները) նիստերի առնվազն կեսից,
- 10.27.4 Օրինական ուժի մեջ մտած վճռով կամ դատավճռով զրկվել է ֆինանսական, բանկային, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից,
- 10.27.5 Մահացել է:
- 10.28 ԽՈՐՀՐԴԻ անդամի լիազորությունները վաղաժամկետ կարող են դադարեցվել նաև լիազորությունների մնացած ժամանակահատվածի, իսկ եթե այդ ժամանակահատվածը մեկ տարուց ավելի է, ապա մեկ տարվա համար սահմանված վարձատրությունը ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ կողմից նրան փոխհատուցելու պայմանով:
- 10.29 ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱՎՈՆՔ ՈՆԻ ԽՈՐՀՐԴԻ անդամի պաշտոնից ազատված անձից դատական կարգով հետ պահանջելու սույն կանոնադրության կետ 10.28 համաձայն նրան փոխհատուցված վարձատրությունը՝ դատարանում ապացուցելով ԽՈՐՀՐԴԻ անդամի կողմից պաշտոնական պարտականությունների թերացման (չկատարման կամ ոչ պատշաճ կատարման) փաստը:

11. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆԸ, ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԸ

- 11.1. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում են ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆԸ և գործադիր տնօրենը՝ սույն կանոնադրությամբ իրենց վերապահված իրավասությունների շրջանակներում:
- 11.2. ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ անդամները նշանակվում են ԽՈՐՀՐԴԻ կողմից: ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ կառուցվածքում պարտադիր ընդգրկվում են ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ գործադիր տնօրենը, նրա տեղակալները, գլխավոր հաշվապահը, ինչպես նաև՝ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ կառուցվածքային այն ստորաբաժանումների ղեկավարները, որոնք կսահմանվեն ԽՈՐՀՐԴԻ որոշմամբ:
- 11.3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ իրավասությանն են պատկանում՝
- 11.3.1. ԽՈՐՀՐԴԻ հաստատմանը ներկայացվող ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ հեռանկարային զարգացման ծրագրի նախնական քննարկումն ու նախնական/պայմանական հաստատումը,
- 11.3.2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ և/կամ ԽՈՐՀՐԴԻ հաստատմանը ենթակա ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ներքին իրավական ակտերին նախնական հավանություն տալը, բացառությամբ Կանոնադրության (փոփոխությունների), ԸՆԴՀԱՆՈՒՐ

- ԺՈՂՈՎԻ, ԽՈՐՀՐԴԻ, ներքին աուդիտի ստորաբաժանման գործունեությունը կանոնակարգող փաստաթղթերի,
- 11.3.3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ կողմից մատուցվող ծառայությունների դիմաց միջնորդավճարների և սակագների սահմանումը,
- 11.3.4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ և ԽՈՐՀՐԴԻ կողմից ընդունված որոշումների ճիշտ և ժամանակին կատարման ապահովումը,
- 11.3.5. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ակտիվների և պասիվների կառավարման իրականացումը,
- 11.3.6. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ընթացիկ, ամենօրյա գործունեությունը կանոնակարգող, օպերատիվ ղեկավարում պահանջող իրավական ակտերի, մեթոդական ձեռնարկների և ուղեցույցների հաստատումը,
- 11.3.7. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ներքին իրավական ակտերով սահմանված գումարը գերազանցող՝ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ կողմից իրականացվող ներդրումների, ներառյալ փոխկապակցված ներդրումների, հաստատումը,
- 11.3.8. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ կողմից մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծման հարցի քննարկումն ու նախնական հավանություն տալը,
- 11.3.9. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ներքին և արտաքին աուդիտորների կամ այլ մարմինների կողմից իրականացված ստուգումների արդյունքների քննարկում և բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների իրականացման ապահովումը,
- 11.3.10. ՀՀ օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ և ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ներքին իրավական ակտերով սահմանված այլ իրավասություններ:
- 11.4. ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆԸ գործում է կանոնադրության, ինչպես նաև ԽՈՐՀՐԴԻ հաստատած՝ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ներքին իրավական ակտերի հիման վրա, որոնք սահմանում են ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ նիստերի հրավիրման ու անցկացման ժամկետներն ու կարգը, ինչպես նաև նրա կողմից որոշումների ընդունման կարգը:
- 11.5. ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ նիստերը կազմակերպում և վարում է գործադիր տնօրենը, ով ի պաշտոնե հանդիսանում է ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ ղեկավարը: ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ նիստերն արձանագրվում են: ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ նիստերի արձանագրությունները ներկայացվում են ԽՈՐՀՐԴԻՆ, ներքին աուդիտին, ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ արտաքին աուդիտն իրականացնող անձին՝ նրանց պահանջով: Նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից հետո՝ 10-օրյա ժամկետում: Նիստի արձանագրությունում նշվում են՝
- 11.5.1. նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը.
- 11.5.2. նիստին մասնակցած անձանց անունները.
- 11.5.3. նիստի օրակարգը.
- 11.5.4. քվեարկության դրված հարցերը, ինչպես նաև քվեարկության արդյունքները՝ ըստ նիստին մասնակցած տնօրինության յուրաքանչյուր անդամի.

- 11.5.5. քվեարկության դրված հարցերի վերաբերյալ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ անդամների և ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ նիստին մասնակցող այլ անձանց կարծիքները.
- 11.5.6. նիստում ընդունված որոշումները:
- 11.6. ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ նիստի արձանագրությունը ստորագրում են նիստին մասնակցող բոլոր անդամները, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:
- 11.7. ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ նիստի որոշումները ստորագրում է գործադիր տնօրենը, ով պատասխանատվություն է կրում որոշման մեջ առկա տեղեկությունների հավաստիության համար:
- 11.8. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ գործադիր տնօրենը նշանակվում է ԽՈՐՀՐԴԻ կողմից: Գործադիր տնօրենը կարող է ունենալ տեղակալներ: Գործադիր տնօրենի տեղակալները նշանակվում են ԽՈՐՀՐԴԻ կողմից՝ գործադիր տնօրենի ներկայացմամբ:
- 11.9. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ գործադիր տնօրենը, որպես իր բացառիկ իրավասություն, ներկայացնում է ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում, ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ անունից կնքում է գործարքներ, գործում է ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ անունից առանց լիազորագրի, տալիս է լիազորագրեր:
- 11.10. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ գործադիր տնօրենը՝
- 11.10.1. ԽՈՐՀՐԴԻ հաստատմանն է ներկայացնում ԽՈՐՀՐԴԻ կողմից հաստատվող՝ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ կողմից հավանություն ստացած ներքին իրավական ակտերը, ինքնուրույն ստորաբաժանումների կանոնադրությունները, ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ կազմակերպական կառուցվածքը,
- 11.10.2. Տնօրինում է ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,
- 11.10.3. Աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ աշխատակիցներին, բացառությամբ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ և ԽՈՐՀՐԴԻ կողմից նշանակվող անձանց,
- 11.10.4. Ներկայացնում է ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆ Այլ անձանց հետ հարաբերություններում ՀՀ տարածքում և օտարերկրյա պետություններում,
- 11.10.5. Գործում է առանց լիազորագրի և տալիս է լիազորագրեր,
- 11.10.6. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,
- 11.10.7. Ապահովում է ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ, ԽՈՐՀՐԴԻ և ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ որոշումների կատարումը,
- 11.10.8. Կազմում, ստորագրում և համապատասխան լիազորված մարմին է ներկայացնում ՀՀ օրենսդրությամբ և նորմատիվ իրավական այլ ակտերով սահմանված հաշվետվություններ,

- 11.10.9. Ստորագրում է ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ նիստերի արձանագրությունները և որոշումները,
- 11.10.10. Բացում է բանկային հաշիվներ,
- 11.10.11. Իր բացակայության կամ պաշտոնեական պարտականությունների կատարման անհնարինության դեպքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ անդամներից մեկին գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակելու հարցը,
- 11.10.12. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ակտիվների գումարի մինչև 1%-ի չափով արժեք ունեցող գույքի ուղղակի և անուղղակի ձեռքբերման և (կամ) օտարման հետ կապված մեկ կամ մի քանի փոխկապակցված գործարքները կնքում է առանց ԽՈՐՀՐԴԻ նախնական հավանության,
- 11.10.13. Իրականացնում է սույն կանոնադրությամբ, ինչպես նաև ԽՈՐՀՐԴԻ սահմանած իրավական ակտերի շրջանակներում նախատեսված՝ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ընթացիկ գործունեության ղեկավարման հետ կապված այլ իրավասություններ:
- 11.11. Այն հարցերը, որոնք օրենքով կամ սույն կանոնադրությամբ չեն սահմանվել որպես ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ, ԽՈՐՀՐԴԻ, ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ, ներքին աուդիտի ստորաբաժանման կամ պատասխանատու ակտուարի իրավասությանը պատկանող, պատկանում են գործադիր տնօրենի իրավասությանը:
- 11.12. Գործադիր տնօրենը ԽՈՐՀՐԴԻՆ պարբերաբար, բայց ոչ պակաս, քան եռամսյակը մեկ, ներկայացնում է ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ և իր գործունեության վերաբերյալ հաշվետվություններ՝ ԽՈՐՀՐԴԻ սահմանած կարգով:
- 11.13. Գործադիր տնօրենի իրավասությանը ենթակա հարցերով որոշումների ընդունումը չի կարող փոխանցվել ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ կառավարման այլ մարմիններին, ներքին աուդիտին, գլխավոր հաշվապահին, պատասխանատու ակտուարին կամ այլ անձի:
- 11.14. Բացառությամբ սույն մասում սահմանված անձանց, գործադիր տնօրենի լիազորությունները պատշաճ կերպով ժամանակավորապես (իննսուն օրը չգերազանցող ժամկետով) կարող են փոխանցվել այլ անձի, եթե վերջինս համապատասխանում է Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով ապահովագրական ընկերությունների գործադիր տնօրենների համար սահմանված մասնագիտական համապատասխանության և որակավորման չափանիշներին:
- 11.15. ԽՈՐՀՐԴԻ կողմից գործադիր տնօրենի կամ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են իր դիմումի համաձայն, կամ եթե՝
- 11.15.1. նա դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

- 11.15.2. նրա պաշտոնավարման ընթացքում ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց ուժով օրենքի համաձայն նրան արգելվում է լինել ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ գործադիր տնօրեն կամ այլ ղեկավար,
- 11.15.3. օրինական ուժի մեջ մտած վճռով կամ դատավճռով զրկվել է ֆինանսական, բանկային, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից,
- 11.15.4. Մահացել է:
- 11.16. Գործադիր տնօրենի լիազորությունները վաղաժամկետ կարող են դադարեցվել նաև լիազորությունների մնացած ժամանակահատվածի, իսկ եթե այդ ժամանակահատվածը մեկ տարուց ավելի է, ապա մեկ տարվա համար սահմանված աշխատավարձը ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ կողմից նրան փոխհատուցելու պայմանով:
- 11.17. ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ իրավունք ունի գործադիր տնօրենի պաշտոնից ազատված անձից հետ պահանջելու սույն կանոնադրության 11.16 կետով նրան փոխհատուցված աշխատավարձը՝ դատարանում ապացուցելով գործադիր տնօրենի կողմից պաշտոնական պարտականությունների թերացման (չկատարման կամ ոչ պատշաճ կատարման) փաստը:

12. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀԸ

- 12.1 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ գլխավոր հաշվապահը իրականացնում է «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով գլխավոր հաշվապահի համար սահմանված իրավունքները և պարտականությունները:
- 12.2 Գլխավոր հաշվապահին նշանակում է ԽՈՐՀՈՒՐԴԸ՝ գործադիր տնօրենի ներկայացմամբ:
- 12.3 Գլխավոր հաշվապահի իրավունքները և պարտականությունները իննսուն օրը չգերազանցող ժամկետով կարող են փոխանցվել այլ անձի, եթե վերջինս համապատասխանում է Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով Ընկերությունների գլխավոր հաշվապահների համար սահմանված մասնագիտական համապատասխանության և որակավորման չափանիշներին: ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ գլխավոր հաշվապահի պարտականությունները, սակայն, չեն կարող փոխանցվել կառավարման այլ մարմիններին, ներքին աուդիտին, պատասխանատու ակտուարին:
- 12.4 Գլխավոր հաշվապահը պատասխանատվություն է կրում ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ հաշվապահական հաշվառման վարման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պետական կառավարման մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

բաժնետերերին, պարտատերերին և մամուլի ու զանգվածային լրատվության մյուս միջոցներին ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ մասին տրամադրվող ֆինանսական տեղեկությունների հավաստիության համար՝ օրենքին, այլ իրավական ակտերին և սույն կանոնադրությանը համապատասխան:

- 12.5 Սույն կանոնադրության 12.4 կետում նշված հաշվետվությունների պատրաստման, ներկայացման կամ հրապարակման համար գլխավոր հաշվապահի պատասխանատվությունը չի տարածվում ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ պատասխանատու ակտուարի կողմից օրենքով սահմանված հաշվետվությունների պատրաստման, ներկայացման, հրապարակման վրա: ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ այն հաշվետվությունները, որոնք պարունակում են տարբեր տեղեկատվություն, որի պատրաստման, ներկայացման կամ հրապարակման համար պատասխանատու են գլխավոր հաշվապահին ու պատասխանատու ակտուարը, ստորագրում են այդ երկու պաշտոնատար անձինք:

13. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԸ

- 13.1 Ներքին աուդիտի ղեկավարին և անդամներին նշանակում է ԽՈՐՀՈՒՐԴԸ: Ներքին աուդիտի անդամ չեն կարող լինել ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ կառավարման մարմինների անդամները, այլ ղեկավարներ ու աշխատակիցներ, ինչպես նաև գործադիր մարմնի անդամների կամ գլխավոր հաշվապահի հետ փոխկապակցված անձինք:
- 13.2 Ներքին աուդիտը, ԽՈՐՀՐԴԻ հաստատած կանոնակարգի համաձայն՝
- 13.2.1 հսկողություն է իրականացնում ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ընթացիկ գործունեության և ռիսկերի նկատմամբ,
 - 13.2.2 հսկողություն է իրականացնում գործադիր մարմնի, գլխավոր հաշվապահի, տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների, պատասխանատու ակտուարի ու ակտուարային ստորաբաժանման կողմից օրենքների, այլ իրավական ակտերի և ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ներքին իրավական ակտերի, գործադիր մարմնին կամ գլխավոր հաշվապահին տրված հանձնարարականների կատարման նկատմամբ,
 - 13.2.3 եզրակացություններ և առաջարկություններ է տալիս ԽՈՐՀՐԴԻ ներկայացրած, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ առաջադրված հարցերի վերաբերյալ,
- 13.3 Ներքին աուդիտի իրավասություններին վերաբերող հարցերը չեն կարող փոխանցվել ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ կառավարման մարմինների կամ այլ անձանց լուծմանը:
- 13.4 Յուրաքանչյուր տարի ԽՈՐՀՈՒՐԴԸ հաստատում է ներքին աուդիտի տարեկան ծրագիրը:
- 13.5 Տարեկան ծրագիրն առնվազն պետք է ներառի՝
- 13.5.1 այն ոլորտները, որտեղ պետք է իրականացվի աուդիտորական ստուգում,

- 13.5.2 առանձին ոլորտներում աուդիտորական դիտարկման բովանդակության նկարագրությունը,
- 13.6 Ներքին աուդիտի ղեկավարը ԽՈՐՀՐԴԻՆ (պատճենը՝ գործադիր մարմնին) է ներկայացնում հետևյալ հաշվետվությունները՝
- 13.6.1 հերթական տարեկան ծրագրով սահմանված ստուգումների արդյունքների մասին,
- 13.6.2 արտահերթ, եթե բացահայտվել են ներքին աուդիտի հիմնավորված կարծիքով էական խախտումներ: Ընդ որում, եթե խախտումները հետևանք են գործադիր մարմնի, գլխավոր հաշվապահի կամ ԽՈՐՀՐԴԻ գործողությունների կամ անգործության, ապա հաշվետվությունը ներկայացվում է անմիջապես ԽՈՐՀՐԴԻ նախագահին,
- 13.7 Ներքին աուդիտի ղեկավարի հաշվետվությունը պետք է առնվազն պարունակի հետևյալ տեղեկությունները՝
- 13.7.1 աուդիտորական դիտարկման նկարագրությունը.
- 13.7.2 դիտարկման արդյունքում բացահայտված խախտումներն ու թերությունները և դրանց վերացման վերաբերյալ առաջարկված միջոցառումները.
- 13.7.3 հայտնաբերված խախտումների և թերությունների վերացման մասին ներքին աուդիտի եզրակացությունը:
- 13.8 13.6 կետով նախատեսված հաշվետվությունները ներկայացվում են խախտումը հայտնաբերելուց առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում:
- 13.9 Ներքին աուդիտն օրենքների, այլ իրավական ակտերի խախտումներ բացահայտելու դեպքում պարտավոր է դրանք ներկայացնել ԽՈՐՀՐԴԻՆ, իսկ պատճենը՝ Կենտրոնական բանկին:
- 13.10 ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ վերստուգիչ հանձնաժողով չի ստեղծվում:

14. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱԿՏՈՒԱՐԸ

- 14.1 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ պատասխանատու ակտուարին նշանակում է ԽՈՐՀՈՒՐԴԸ:
- 14.2 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ պատասխանատու ակտուարը՝
- 14.2.1 ստուգում է ապահովագրավճարների հաշվարկման և տեխնիկական պահուստների ձևավորման համապատասխանությունը սույն օրենքի և այլ իրավական ակտերի պահանջներին,
- 14.2.2 պարզում է, թե ապահովվում է արդյոք ապահովագրության պայմանագրերից բխող պարտավորությունների կատարումը հաշվարկված ապահովագրավճարներով և ձևավորված պահուստներով,
- 14.2.3 հաշվարկում է ապահովագրական սակագները, ապահովագրավճարները,

- 14.2.4 հավաստում է ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ կողմից «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» օրենքի 4-րդ բաժնով սահմանված պահանջների պահպանումը,
- 14.2.5 պատրաստում, ներկայացնում կամ հրապարակում է օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված այն հաշվետվությունները, որոնք ունեն հետևյալ բովանդակությունը՝
- 14.2.5.1 տեխնիկական պահուստների հաշվարկման սկզբունքներն արտացոլող հաշվետվություն,
- 14.2.5.2 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ պահուստների, պահուստներին համարժեք ակտիվների և ապահովագրության պայմանագրերից բխող պարտավորությունների համարժեքությունն արտացոլող հաշվետվություն,
- 14.2.5.3 ապահովագրավճարների (ապահովագրական սակագների) բավարար լինելն արտացոլող հաշվետվություն,
- 14.2.5.4 «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ տնտեսական նորմատիվների փաստացի մեծությունն արտացոլող հաշվետվություն:
- 14.3 Գործադիր մարմինը պարտավոր է պատասխանատու ակտուարին տրամադրել իր լիազորություններն իրականացնելու համար անհրաժեշտ տեղեկություններ:
- 14.4 Պատասխանատու ակտուարը պարտավոր է եռամսյակը մեկ ԽՈՐՀՐԴԻՆ ներկայացնել հաշվետվություն:
- 14.5 Եթե պատասխանատու ակտուարը իր լիազորություններն իրականացնելիս բացահայտել է, որ ապահովագրավճարները չեն հաշվարկվել, իսկ տեխնիկական պահուստները չեն ձևավորվել «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով, և դրա արդյունքում ապահովագրության պայմանագրերից բխող պարտավորությունների կատարումը դրվել է վտանգի տակ, ապա պատասխանատու ակտուարն այդ մասին պետք է անհապաղ, բայց ոչ ավելի, քան հինգ օրվա ընթացքում գրավոր տեղեկացնի ԽՈՐՀՐԴԻՆ, գործադիր մարմնին և Կենտրոնական բանկին:
- 14.6 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ տարեկան հաշվետվությունը պետք է ներառի պատասխանատու ակտուարի հաշվետվությունը և ապահովագրավճարների ու տեխնիկական պահուստների՝ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հաշվարկված լինելու մասին եզրակացությունը:

15. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԱՈՒԴԻՏԸ

- 15.1 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ֆինանսատնտեսական գործունեությունը յուրաքանչյուր տարի պետք է ենթարկվի աուդիտի՝ աուդիտ իրականացնող անձի կողմից: Աուդիտն իրականացնող անձը ընտրվում է օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված չափանիշներին համապատասխան:
- 15.2 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ աուդիտ ցանկացած ժամանակ կարող է հրավիրվել ԽՈՐՀՐԴԻ կողմից՝ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ միջոցների հաշվին:
- 15.3 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ֆինանսատնտեսական գործունեության ստուգումն արտաքին աուդիտն իրականացնող անձի կողմից կարող է իրականացվել նաև ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ՝ քվեարկող բաժնետոմսերի առնվազն 5 տոկոսի սեփականատեր հանդիսացող բաժնետերերի պահանջով: Այդ դեպքում աուդիտն իրականացնող անձին ընտրում, նրա հետ պայմանագիր են կնքում, նրա ծառայությունների դիմաց վճարում են աուդիտ պահանջող մասնակիցները: Ընդ որում, սույն կետում նշված անձինք կարող են ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԻՑ պահանջել իրենց կատարած ծախսերի հատուցում, և ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ պարտավոր է հատուցել դրանք, եթե այդ աուդիտն ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ կամ ԽՈՐՀՐԴԻ որոշմամբ արդարացված է եղել ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ համար:
- 15.4 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ աուդիտն իրականացնող անձի հետ կնքվող պայմանագրում, բացի աուդիտորական եզրակացություն կազմելու պարտավորության ամրագրումից, պետք է նախատեսի նաև աուդիտորական հաշվետվության (նամակ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ղեկավարության) կազմում:
- 15.5 ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆ աուդիտն իրականացնող անձի հետ կնքվող պայմանագրում պետք է նախատեսի նաև իր կողմից Կենտրոնական բանկին ներկայացվող հաշվետվությունների արժանահավատության ստուգում, տեխնիկական պահուստների, հիմնական տնտեսական նորմատիվների պահանջներին, տեխնիկական պահուստներին համարժեք ակտիվների տեղաբաշխման՝ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխանության մասին:
- 15.6 Աուդիտորի եզրակացությունը և հաշվետվությունն ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ Կենտրոնական բանկ է ներկայացնում «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված ժամկետներում:
- 15.7 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ աուդիտն իրականացնող անձը եզրակացություն է ներկայացնում նաև՝
- 15.7.1 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ տեխնիկական պահուստների համարժեքության մասին,
- 15.7.2 «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով

սահմանված՝ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ տնտեսական նորմատիվների պահանջներին համապատասխանության մասին,

15.7.3 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ տեխնիկական պահուստներին համարժեք ակտիվների տեղաբաշխման՝ սույն օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխանության մասին,

15.7.4 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ներքին աուդիտի գործունեության, ներքին հսկողության համակարգի՝ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխանության մասին,

15.7.5 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ներքին տեղեկատվական համակարգի առկայության կամ որակի մասին,

15.7.6 Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների ամբողջականության ու հավաստիության մասին:

16. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ

16.1 ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ հրապարակում է տեղեկատվություն իր բաժնետերերի և ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ գործունեության վերաբերյալ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով և ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված ծավալներով և ժամկետներում:

16.2 ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ տեղեկատվությունը հրապարակում է իր ինտերնետային կայքում, ինչպես նաև մամուլում և էլեկտրոնային լրատվական միջոցներով:

16.3 ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ կարող է հրապարակել նաև օրենքով չարգելված ցանկացած տեղեկատվություն:

17. ԱՅԼ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

17.1 Հայաստանի Հանրապետության տարածքում և նրանից դուրս ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ այլ ձեռնարկությունների կանոնադրական կապիտալում բաժնեմասեր չունի:

18. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ

18.1 ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ կարող է Օրենքով, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով, Կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով

սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության տարածքում և Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ստեղծել մասնաճյուղ և ներկայացուցչություն:

- 18.2 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ստեղծումն ու դրանց գործունեության դադարեցումն իրականացվում են ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ որոշման հիման վրա՝ Օրենքով, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:
- 18.3 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ մասնաճյուղը իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող և ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ գտնվելու վայրից դուրս գտնվող առանձնացված ստորաբաժանում է, որը գործում է Ընկերության կողմից հաստատած կանոնադրության հիման վրա և ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ կողմից տրված լիազորությունների շրջանակներում:
- 18.4 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ներկայացուցչությունը ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ՝ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող և ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ գտնվելու վայրից դուրս գտնվող առանձնացված ստորաբաժանում է, որը ներկայացնում է ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ, ուսումնասիրում է ֆինանսական շուկան, ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ անունից կնքում է պայմանագրեր և իրականացնում համանման այլ գործառույթներ:
- 18.5 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գույքը հաշվառվում են ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ հաշվեկշռում, ինչպես նաև կարող են հաշվառվել դրանց առանձին հաշվեկշիռներում:
- 18.6 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ղեկավարները նշանակվում են ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ կողմից, գործադիր տնօրենի ներկայացմամբ:
- 18.7 ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ պատասխանատվություն է կրում մասնաճյուղի և ներկայացուցչության պարտավորությունների համար:

19. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ

- 19.1 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելը, ինչպես նաև ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատելը տեղի է ունենում ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ որոշմամբ, որն ընդունվում է ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ մասնակցած քվեարկող բաժնետերերի ծայների 3/4-ով:

20. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

- 20.1 ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ կարող է վերակազմակերպվել բացառապես մեկ այլ ապահովագրական ընկերության հետ միացման կամ վերակազմավորման միջոցով:

- 20.2 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ վերակազմակերպումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, սույն օրենքով, այլ օրենքներով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով:
- 20.3 ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ լուծարվում է՝
- 20.3.1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ որոշմամբ (ինքնալուծարում),
 - 20.3.2 լիցենզիայի ուժը կորցրած ճանաչելու դեպքում,
 - 20.3.3 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ սնանկության դեպքում:
- 20.4 ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ լուծարվում է ՀՀ օրենսդրության, ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգին և սույն կանոնադրությանը համապատասխան:
- 20.5 ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ լուծարման մասին հայտարարությունը հրապարակվում է մամուլում: